«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

28/12/2021թ.

Հայաստանի Հանրապետության Նախագահ,

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ

պարոն Արմեն Սարգսյանին

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 26/1

Մեծարգո նախագահ,

Ինչպես գիտեք Ազգային ժողովում ստեղծվել է քննիչ հանձնաժողով, որն ուսումնասիրում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից «Մենք ենք մեր սահմանները» համազգային դրամահավաքի շրջանակներում հավաքագրված միջոցներից 52,703,114,000 ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու, դրանցով ֆինանսավորված կոնկրետ ծախսերի և միջոցառումների՝ Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրական նպատակներին և նվիրաբերության պայմանագրին համապատասխանությունը:

Ելնելով անհրաժեշտությունից, քննիչ հանձնաժողովը հրավիրում է Ձեզ 2022թ. հունվարի 11-ից 14-ը ներառյալ ժամանակահատվածում՝ Ձեզ համար նախընտրելի օրը և ժամին մասնակցելու Հանձնաժողովի նիստին: Ակնկալվում է, որ նիստը կտևի շուրջ իննսուն րոպե: Նիստի օրը և ժամը առաջարկում ենք համաձայնեցնել աշխատանքային կարգով:

Ձեր մասնակցությունը քննիչ հանձնաժողովի նիստին չափազանց կարևոր է, հաշվի առնելով Հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակն ու լիազորությունները, ինչպես նաև ելնելով այն հանգամանքներից, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես է գալիս ՀՀ նախագահը, ով նաև ի պաշտոնե հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է:

«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրության համաձայն, վերջինիս կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների

խորհուրդն է: Հարկ է նշել նաև նաև, որ պաշտոնական հրապարակումների և քննիչ հանձնաժողովի կողմից հիմնադրամին ուղղված հարցման պատասխանի համաձայն, վերը նշված միջոցները պետական բյուջե են փոխանցվել հոգաբարձուների խորհրդի որոշումներով:

Քննիչ հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում հարցեր են առաջացել վկայակոչված որոշումների կայացման և իրականացման գործընթացներում օրինականության (այդ թվում՝ միջոցների ծախսման նպատակայնության) առնչությամբ:

Հարգելի պարոն նախագահ, լիահույս ենք, որ Ձեր մասնակցությունը կնպաստի առաջադրված հարցերին սպառիչ պատասխաններ գտնելուն, առարկայական եզրակացությունների հանգելուն, ինչպես նաև համայանկական ռեսուրսների մեկտեղման և հայրենիքի բարգավաճմանը նպաստող նախաձեռնությունների (ինչպիսին «Հայաստան» համահայկական հիմնադրամն է) հիմքերի ամրապնդմանը:

Առդիր քննիչ հանձնաժողովի 27.12.2021թ. որոշումը 1 էջ:

Հարգանքով՝
հանձնաժողովի նախագահ՝ **Արծվիկ Մինասյան**

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27.12.2021թ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Հանձնաժողովի ուսումնասիրության առարկայի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու նպատակով՝ 2022թ հունվարի 11-ից 14-ը ներառյալ ժամանակահատվածում անցկացնել քննիչ հանձնաժողովի նիստ՝ նիստին մասնակցելու համար հրավիրելով Հայաստանի Հանրապետության նախագահ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սարգսյանին:

Քննիչ հանձնաժողովի նախագահ՝ **Արծվիկ Մինասյան**